

**ՃԱԿԱՏԱԳՐԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄԸ
ՕՐՀԱՆ ՓԱՍՏՈՒՔԻ «ԿԱՐՄԻՐ ՄԱԶԵՐՈՎ ԿԻՆԸ» ՎԵՊՈՒՄ**

Բանալի բառեր – պոստմոդերնիզմ, թուրքական գրականություն, ճակատագրապաշտություն, առասպել, ինքնության փնտրտուք

Հայրեր-որդիներ կամ վարպետներ-աշակերտներ/աշկերտներ հարաբերությունների թեմատիկան արևելյան գրականության մեջ բավական տարածում ունի և առավելապես հանդիպում է դրա կրոնական երանգավորում ունեցող տարբերակը՝ Ուսուցիչ (մյուրշիդ) և աշակերտ (մյուրիդ) կապը: Թուրք հայտնի գրող, Նոբելյան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուքը (ծնվ. 1952 թ.) ևս իր տարբեր վեպերում արժարժում է այդ թեմատիկան՝ փորձելով դա նաև դիտարկել որպես կատարելության ձգտելու ու հասնելու խնդիր: Լինելով պոստմոդերնիստ հեղինակ և թուրքական գրականության մեջ զարգացնելով այդ ուղղության տարբեր սկզբունքներ՝ Փամուքը իր ստեղծագործությունների հիմքում միշտ դնում է փնտրտուքի գաղափարը, որը շատ հաճախ կոնկրետանում է հերոսի ինքնության, սեփական Ես-ի փնտրտուքի շուրջ: Փամուքի մյուս կարևոր առանձնահատկությունը Արևելքի ու Արևմուտքի կամ Թուրքիայի և Եվրոպայի բախման խնդիրն է, որը նույնպես իր տարբեր վեպերում պատկերում է եվրոպական ու արևելյան ինքնությունների բախման համատեքստում: Հեղինակը առաջ է քաշում նաև այն հարցը, թե ինչպես պետք է գոյակցեն եվրոպական ու թուրքական ինքնությունները, կամ ինչպես ինտեգրվելով Եվրոպային՝ չկորցնել ինքնությունը: Փամուքի համար այս թեմայի պատասխանը, ըստ էության, չկա, և նրա համար կարևորը մտածելն ու բանավեճն է¹, կամ մեր ընկալմամբ՝ փնտրտուքը: Պոստմոդերնիստական ստեղծագործություններում որոշակիորեն արժարժվում է նաև ճակատագրապաշտության (ֆատալիզմի) թեման, իսկ Փամուքի պարագայում դա կրկին ներկայացվում է Ես-ի փնտրտուքի, այդ ճանապարհին ապրած ինքնության խառնաշփոթի, երբեմն՝ կորստի համապատկերում: Իր տարբեր վեպերում Փամուքը ակնարկում կամ հպանցիկ անդրադառնում է նաև որոշ առասպելների, ասքերի և էպիկական պատումների՝ դրանով մի կողմից կիրառելով ինտերտեքստայնության, իսկ մյուս կողմից այլաբանության տարրեր:

¹ Տե՛ս **Чижова Е.**, Аллаху принадлежит и Восток, и Запад..., «Вопросы литературы», 2010, № 3, с. 17.

Փամուքի նոր վեպը, որը հրատարակվել է 2016 թ. սկզբին, վերնագրված է «Կարմիր մազերով կինը» և նվիրված է ճակատագրապաշտությամբ պարուրված ինքնության փնտրտուքի թեմային, սակայն այստեղ հիշյալ խնդիրը տրված է արևելյան դասական ու հանրահայտ առասպելի՝ «Ռոստամ և Զոհրապի» ու էպիկական պատումի տարրեր պարունակող արևմտյան ողբերգության՝ Մոֆոկլեսի «Էդիպ արքայի» միախառնումով և դրանցում առկա մոտիվների փոխակերպմամբ: Պոստմոդեռնիստական մեթոդների կիրառմամբ բարդ սարդոստայնում են միավորված տարրեր իրողություններ, գաղափարներ և երևույթներ, սակայն երբեմն պարզ, երբեմն ենթատեքստում ու այլաբանորեն կրկին պատկերված է Արևելքի ու Արևմուտքի բախման խնդիրը: Փամուքի նոր վեպում պատահականությունների շղթան և ռեալ իրականությունը շաղկապված են միմյանց, սակայն առանցքում ունեն արևելյան առասպելի և արևմտյան ողբերգության սյուժետային հստակ գծերն ու մոտիվները: Բացի այդ, ինչպես բոլոր պոստմոդեռնիստական վեպերում, այստեղ ևս կա դեղեկտիվ ուղղվածություն. տասնամյակներ առաջ գործած մեղքը հանգիստ չի տալիս հերոսին և նրա մեջ ստեղծում ֆատալիստական տրամադրություններ ու որոշակի վախ: Որպես վեպի բնաբան ընտրված երեք մտքերից մեկն էլ մեջբերում է հենց «Էդիպ արքա»-յից. «Շատ վաղուց գործված մեղքի հետքերը ինչպե՞ս կարող ենք գտնել»: Վեպում իրականը և առասպելականը հետզհետե միախառնվում են իրար և գլխավոր հերոսը, ըստ էության, դառնում է առասպելի գերի, ապրում դրա օրենքներով և ի վերջո ունենում համանման վախճան, որին կարծես թե գիտակցված գնում է իր ամբողջ կյանքում:

«Կարմիր մազերով կինը» վեպի մեծ մասը պատմվում է գլխավոր հերոսի կողմից, առաջին դեմքով. դասական սյուժետային գիծը և գրեթե ռեալիստական նկարագրությունները ընդհատվում են պոստմոդեռնիստական հնարքով, երբ հերոսը պատմում է իր ամբողջ կյանքը՝ ընդհուպ մինչև մահը: Այսինքն՝ մետաֆիկցիոն տարբերակով մահացածը պատմում է վեպի հիմնական սյուժեն և նկարագրում անգամ իր մահը: Ի դեպ, այդ հնարքը առավել շեշտված հանդիպում ենք Փամուքի նախորդ գրքերից մեկում՝ «Իմ անունը Կարմիր է» վեպում, երբ գլուխներից մեկը պատմում է մահացածը: «Կարմիր մազերով կինը» վեպի գլխավոր հերոսը մի պատանի է՝ Ջեմ անունով, ով իր պատմությունը սկսում է փամուքյան դասական մտքով կամ գաղափարով. «Իրականում ուզում էի գրող դառնալ, սակայն այն դեպքերից հետո, որոնց մասին պատմելու եմ, դարձա երկրաբան-ինժեներ»¹: Ինչպես դիպուկ նկատել է թուրք գրականագետ Ֆեթիհ Դեմիրը. «Փամուքի բոլոր վեպերում

¹ **Pamuk O.**, Kırmızı Saçlı Kadın, İstanbul, 2016, s. 9. Այսուհետ այս գրքից հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ՝ նշելով միայն էջը:

կան, ավելին՝ վեպերը լի են գրականությամբ զբաղվող, գրող հերոսներով»¹: Հենց սկզբից պատմողը, ով նաև գլխավոր հերոսն է, երկխոսության մեջ է մտնում ընթերցողի հետ և, մինչև ժամանակ, հետևելով պոստմոդեռնիստական որոշ իրողությունների՝ նկատում է, որ այն պատմությունը, որը պատրաստվում է պատմել, դեռ չի ավարտվել, և թող ընթերցողները այդպես չկարծեն (էջ 9): Օրհան Փամուքը, խոսելով նորագույն շրջանի վեպի, գրողի և հերոսների հարաբերությունների մասին, կարծիք է հայտնում, որ ժամանակակից հեղինակը ձգտում է պատկերել ոչ թե հերոսի տեսանկյունը և մտեցումները, այլ այն, ինչ կա նրա մտքում: Եվ զգալով, թե ինչ բարդ է ըմբռնել աշխարհի և դեպքերի էությունն ու տրամաբանությունը՝ «Հեղինակը որոշում է, որ ինքը սահմանափակ է և իրեն հետ է քաշում ու վեպը գրեթե հանձնում է հերոսին»²: Այս պոստմոդեռնիստական ընկալման մեջ որոշակի դեր է վերապահված նաև ընթերցողին, ով երբեմն դառնում է այդ ստեղծագործության ոչ թե պասիվ ընթերցողը, այլ ձևավորողներից մեկը:

Վեպում դեպքերը սկսվում են մոտավորապես 1980-ականներին և շարունակվում ընդհուպ մինչև 2010-ականները: Հերոսը՝ Ջեմը, լինելով դպրոցական, արձակուրդներին աշխատում է ջրհոր փորող վարպետ Մահմութի մոտ որպես աշկերտ այն ժամանակ Ստամբուլից ոչ շատ հեռու գտնվող Օնգյորեն գյուղաքաղաքում: Կարծում ենք, որ ընտրված արհեստը՝ ջրհոր փորելը, նույնպես պոստմոդեռնիստական փնտրտուքի խորհրդանիշ է պարունակում. պետք էր ճիշտ ընտրել հավանական ջրի տեղը, այնուհետ փորել և դժվարություններ հաղթահարելով՝ հասնել նպատակին, այսինքն՝ ջրին: Վեպում ներկայացվում է վարպետ-աշկերտ հարաբերությունների ձևավորման ընթացքը: Վարպետ Մահմութը ունենում է երկու առանձնահատկություն. մեկը ձգտում է լավ հարաբերություն հաստատել աշկերտի հետ և նրա հանդեպ խիստ հոգատար է, իսկ մյուսը սիրում է տարատեսակ պատմություններ պատմել, և դրանք մեծ մասամբ ուսուցողական, գաղափարական հենք պարունակող դեպքեր էին: Վեպում վարպետ-աշկերտ հարաբերությունները հավասարեցված են հայր ու որդի հարաբերություններին, և Մահմութը ասում է Ջեմին, որ վարպետ-աշկերտ հարաբերությունների գաղտնիքը հենց դրա մեջ է թաքնված (էջ 34): Ջրհոր փորելու աշխատանքները սկզբում նորմալ են ընթանում, սակայն որոշ ժամանակ անց սկսում են բարդություններ, քանի որ նախ ժայռային շերտի են հանդիպում, և բացի դրանից՝ ջուրը դեռ չեն կարողանում գտնել: Աշխատանքից հետո դեռահաս պատանի հերոսը շրջում է Օնգյորենի փողոցներում և հանդիպում շրջիկ

¹ **Demir F.**, Orhan Pamuk'un Postmodern Bir Labirente Yazıyı Arayan Kahramanları, Turkish Studies, 2011, 6/3, p. 1812.

² **Esen N.**, Modern Türk Edebiyatı Üzerine Okumalar, İstanbul, 3-üncü Baskı, 2012, s. 215, տե՛ս նաև, **Pamuk O.**, Öteki Renkler, İstanbul, 1999, s. 115.

վրանային թատրոնի, որտեղ աշխատում էին ձախակողմյան քաղաքական խմբավորումների նախկին ակտիվիստներ, և այլաբանորեն փորձում է արձարձել իրենց դավանած գաղափարախոսության որոշ տարրեր և առաջնահերթություններ: Խաղացանկում ընդգրկված էին առասպելներից, ասքերից որոշ հատվածներ՝ գուգակցված սիրային և սուֆիական թեմաներով: Դերասանուհիներից մեկը մոտ 35 տարեկան, դուրեկան արտաքինով և կարմիր մազերով կին է լինում, ով անմիջապես գրավում է պատանի Ջեմի ուշադրությունը: Հեղինակը չի նշում կնոջ անունը, այլ ուղղակի նրա մազերի գույնը կիրառում որպես անձնանուն՝ Կարմիր մազերով կինը: Միայն ավելի ուշ՝ վեպի 67-րդ էջում է հեղինակը տալիս Կարմիր մազերով կնոջ իրական անունը՝ Գյուլջիհան, և իր այդ թաքցնելը բացատրում հետևյալ կերպ. «Հիմա էլ՝ տարիներ անց, նրա անունը անգամ ընթերցողներից ցանկանում եմ թաքցնել խանդից դրդված, սակայն պետք է իմ ամբողջ պատմությունը անկեղծորեն պատմեմ» (էջ 67): Թատերական ներկայացումներից մեկից հետո Ջեմը ծանոթանում է Կարմիր մազերով կնոջ հետ, ում բազմիցս հետևել է քաղաքի փողոցներում: Կարելի է ասել, որ վեպում կա նաև սիրային սյուժետային գիծ, որը թերևս դիպվածային է, սակայն ճակատագրական ու միևնույն ժամանակ պատված տարատեսակ պատահականություններով և համընկնումներով: Սակայն նկատենք, որ Օրհան Փամուքը ավելի վաղ կարծիք էր հայտնել, որ գրականությունը պետք է հնարավորինս հեռու մնա սիրո թեմայից: Եվ հենց Փամուքի խոստովանությամբ բավական բարդ է եղել, և ինքը ջանքեր է գործադրել միտումնավոր հեռու մնալու սիրո թեմայից¹, սակայն, մեր կարծիքով, դա չի ստացվել, և նրա գրեթե բոլոր գրքերում այդ թեման կա ուղղակի կամ տողատակերում: Քննարկվող վեպում, իհարկե, պատանի հերոսին իրենից տարիքով մեծ կնոջ նկատմամբ հետաքրքրությունը առաջին հերթին բխում է սեռական ցանկություններից, սակայն գրողը հետզհետե ներկայացնում է այդ հանդիպման ոչ պատահական, այլ ընդհակառակը՝ ճակատագրական լինելը: Վեպի այդ հատվածում են առաջին անգամ առասպելային տարրերը և իրական կյանքը միահյուսվում իրար: Խոսելով Կարմիր մազերով կնոջ հետ՝ Ջեմը պատմում է իր հորից, ով ձախակողմյան գործիչ է եղել, 1980 թ. ռազմական հեղաշրջումից հետո ձերբակալվել է, կտտանքների ենթարկվել (էջ 68): Հարցնելով հոր անունը՝ Կարմիր մազերով կինը ընկնում է մտքերի մեջ և առաջարկում Ջեմին մի քիչ զբոսնել ու խոսել նրա հորից: Այդ գիշեր Կարմիր մազերով կնոջը ուղեկցելով տուն՝ 16-ամյա Ջեմը առաջին անգամ և շատ պատահականորեն սեռական հարաբերություն է ունենում նրա հետ, և դա

¹ St' u Ecevit Y., Türk Romanında Postmodernist Açılımlar, İstanbul, 2011, 7, Baskı, s. 137.

տարիներ անց դառնալու էր առասպելի ոգով ապրող հերոսների կյանքում ճակատագրական:

Վեպի սյուժետային մյուս գիծը՝ ջրհոր փորելը, շարունակ ձգձգվում է, և ջուրը այդպես էլ չի գտնվում, սակայն վարպետ Մահմութը հաստատական է և հույսը չկորցնելով՝ շարունակում է աշխատել: Եվ մի օր՝ աշխատանքի ընթացքում, հողով լի դույլը պոկվում է պարանից և ընկնում 25 մետր խորությամբ ջրհորի հատակում աշխատող Մահմութի վրա: Աշկերտ Ջեմը նախ փորձում է ինչ-որ քայլեր անել, սակայն հետո հասկանում է, որ կարող են իրեն մեղադրել սպանության մեջ, և այդ դեպքում նրա բոլոր երազանքները՝ շարունակել կրթությունը, ջուրը կընկնեն: Ու հապշտապ հավաքելով իր իրերը և կարծելով, որ վարպետը մահացել է՝ արագորեն հեռանում է Օնգյորենից: Այսինքն՝ չի փորձում օգնել վարպետին, չի կանչում մարդկանց, որպեսզի ջրհորի հատակից բարձրացնեն Մահմութին և գրեթե առասպելական մոտիվով սպանում կամ լքում է իր վարպետ-հորը:

Վեպի երկրորդ մասում դեպքերը շատ ավելի արագ են պատկերված. Ջեմը ընդունվում է համալսարան երկրաբան-ինժեներ մասնագիտությամբ, հաջողություններ արձանագրում ուսման մեջ: Նա անընդհատ փորձում է մոռանալ իր գործած հանցանքը՝ վարպետին լքելը, սակայն չի կարողանում, և միշտ նրան ուղեկցում է այն հարցը, թե ինչ եղավ վարպետին, արդյո՞ք նա փրկվեց, թե՞ ոչ: Պոստմոդեռնիստական պատկերումները ավելի ընդգծված բնույթ են ստանում, երբ սյուժեի մեջ է մտնում Սոֆոկլեսի գրած «Էդիպ արքա»-ի պատմությունը՝ որպես հերոսի մտասևեռում: Համալսարանական երրորդ կուրսում նա պատահաբար հանդիպում է «Էդիպ արքա»-ի թուրքերեն թարգմանությանը և անկախ իրենից կարդում, այնպես, «կարծես ուզում էի իմ կյանքի մասին մի գաղտնիք իմանալ» (էջ 95): Համալսարանն ավարտելուց հետո Ջեմը սկսում է աշխատել անշարժ գույքի կառուցապատման ոլորտում և կարճ ժամանակում մեծ հաջողությունների հասնում: Գործուղումներից մեկի ժամանակ՝ Թեհրանում, Ջեմը տեսնում է մի նկար, որը նրան ծանոթ է թվում. «Կարծես այդ թեման գիտեի, բայց ցանկացել էի մոռանալ» (էջ 105): Պարզվում է, որ այդտեղ հայտնի Շահնամեի «Ռոստամ և Ջոհրապ» առասպելի այն մասն է պատկերված, երբ Ռոստամը, չիմանալով սպանելով իր որդի Ջոհրապին, նրան գիրկն էր առել և գուրգուրում էր վերջինիս անշնչացած մարմինը: Ահա այստեղ Փամուքը առաջ է քաշում իր նախընտրած մյուս գիծը՝ Արևելքի և Արևմուտքի բախում այս անգամ «Ռոստամ և Ջոհրապ» առասպելի ու «Էդիպ արքա» ողբերգության միջոցով: Սակայն բախումը շատ ընդգծված և սուր չէ. երկու ստեղծագործությունները ավելի շատ լրացնում են միմյանց՝ դառնալով միևնույն պատկերի տարբեր կողմերը: Դրանից հետո հերոսի՝ Ջեմի մեջ «Ռոստամ ու Ջոհրապ»-ի և «Էդիպ արքա»-ի սյուժետային գծերը, մոտիվները միահյուսվում են. հերոսը այլևս չի կարողանում ազատվել դրանց ազդեցությունից և իր կյանքի

հետագա ընթացքը պայմանավորում է դրանցով՝ հետզհետե ավելի շատ տեղ տալով ֆատալիստական տարրերին:

Դիպաշարային մի դրվագ վեպի կեսերից սկսում է զարգանալ ու ինչ-որ մի պահից՝ լրացնել հիմնական գիծը. Ջեմը, ամուսնանալով իր սիրած աղջկա՝ Այշեի հետ, կազմում է ընտանիք, սակայն չի կարողանում երեխա ունենալ: Վեպում ժամանակ առ ժամանակ հեղինակը նշում է, որ զույգը շատ է ուզում երեխա ունենալ, դիմում է տարբեր մեթոդների, արտասահմանյան բժիշկների, սակայն անօգուտ: Ջեմը և Այշեն, լինելով բավական ապահովված, մարդիկ սկսում են շրջագայել աշխարհով, սակայն այդ շրջագայություններում անգամ առասպելները ուղեկցում են նրանց: Մասնավորապես՝ լինելով համաշխարհային ճանաչում ունեցող թանգարաններում՝ նրանք հատկապես կենտրոնանում են հոր կողմից որդուն սպանող կամ հակառակը պատմող ցուցանմուշների, նկարների վրա: Օրինակ՝ մոսկովյան Տրետյակովյան պատկերասրահում Իվան Ահեղի կողմից որդուն սպանելու նկարը նրանց մեջ անմիջապես զուգահեռներ է առաջացնում Ռոստամի կողմից Ջոհրապին սպանելու առասպելի հետ (էջ 122): Հեղինակը ի ցույց է դնում Ջեմի և Այշեի երջանիկ հարաբերությունները, և չնայած որ երեխա չեն ունենում, բայց նրանք դառնում են լավ ընկերներ, ամուսիններ: Այշեն նույնպես տարվում է Ջեմին տանջող սյուժեներով և պատումներով, ու նրանք միասին են դառնում այդ առասպելների ոգով ապրողներ՝ առասպելակենտրոն անձինք: Ջեմը, որոշ ժամանակ անց ի մի բերելով իր կյանքն ու ձեռքբերումները, նկատում է. «Իմ կյանքում ի՞նչ գեղեցիկ բան կա բացի կնոջս հետ լավ ընկերական հարաբերություններից և Ջոհրապի ու Էդիպի պատմությունների հանդեպ սիրողական հետաքրքրությունից» (էջ 125):

Մասնագիտական ոլորտում հաջողությունների հասնելուց հետո՝ Ջեմը ստեղծում է իր սեփական շինարարական կազմակերպությունը և այն անվանում առասպելի հերոսի անվամբ՝ «Ջոհրապ»: Տարիներ անց էլ Ջեմի հոր թաղման ժամանակ նրան է մոտենում մի անծանոթ՝ Սըրրը անունով (այդ անունը նույնպես խորհրդանշական է, և կարելի է նմանեցնել *sir*՝ գաղտնիք բառին) և ներկայանալով որպես Օնգյորենի բնակիչ՝ դիմում է խնդրանքով ու խոսքի մեջ պատմում, որ վարպետ Մահմութը տարիներ առաջ, ի վերջո, այն ջրհորից ջուր է գտել: Այդ միջոցով Ջեմը իմանում է, որ տասնամյակներ շարունակ իրեն տանջած գաղտնիքը, թե արդյոք ջրհորն ընկած վարպետը ողջ է մնացել, թե ոչ, պարզվում է: Ավելին՝ ջուրը գտնելուց հետո այդ տարածքի տերը և պատվիրատուն Մահմութին շոայլորեն վարձատրել է և ընկնելու պատճառով վիրավորված վարպետին հարգանքով են վերաբերվել. նա հաստատվել է Օնգյորենում, որտեղ համընդհանուր հարգանքի պայմաններում ապրել է և տարիներ հետո մահացել (էջ 137): Ահա հենց այս Սըրրը անունով մարդը, ով ծանոթ է լինում Ջեմի հորը, պատմում է, որ հոր մասին

տարածված է մի ասեկոսե, համաձայն որի՝ հայրը, ով եղել է ձախակողմյան շարժումների ակտիվ անդամ, սիրահարված է եղել այդ շարժման մասնակից գեղեցիկ մի աղջկա, ում հետ որոշ ժամանակ համատեղ ապրել են: Սակայն այդ նույն աղջկան սիրել է շարժման ղեկավար կազմից մեկ ուրիշը, և ի վերջո աղջիկը ամուսնացել է նրա հետ: Որոշ ժամանակ անց հոր սիրելիի ամուսնուն սպանում են, ու նա այս անգամ ամուսնանում է վերջինիս կրտսեր եղբոր հետ: Սակայն ամենահետաքրքրականն այն է, որ այդ կինը, պարզվում է, եղել է Օնգյորենում շրջիկ վրանային թատերական խմբի դերասանուհին՝ Կարմիր մազերով կինը՝ Գյուլջիհանը, ով հերոսի՝ Ջեմի հոր փաստացի կինն է եղել և հետո սեռական մեկանգամյա կապ է ունեցել նրա որդու հետ: Այդ գրույցից հայտնի է դառնում, որ Կարմիր մազերով կինը որդի է ունեցել, ում հետ էլ ապրում է Օնգյորենում և որդին էլ աշխատում է որպես հաշվապահ (էջ 139): Փաստորեն, առասպելական որոշակի տարրեր արդեն իրականություն էին դառնում և հերոսն ու նրա հայրը սեռական կապ են ունեցել նույն կնոջ հետ, հայրը՝ սևական, իսկ որդին՝ դիպվածային:

Դրանից հետո, կապված «Ջոհրապ» կազմակերպության գործունեությունից առաջացած դժգոհությունների հետ, Ջեմը սկսում է ստանալ տարատեսակ նամակներ, և դրանցից մեկը ուշագրավ է լինում ու մի կողմից ազդում հերոսի ներաշխարհի վրա, իսկ մյուս կողմից լրացնում առասպելական ընթացքը: Նամակում ասվում է. «Պարո՛ն Ջեմ, հարգանքներիս հավաստիքը, դու իմ հայրն ես: «Ջոհրապ» կազմակերպությունը Օնգյորենում սխալ բաներ է անում: Քեզ որպես քո որդի ուզում եմ նախագուշացնել: Եթե այս հասցեով ինձ գրես՝ ամեն ինչ կպատմեմ: Որդուցդ մի՛ վախեցիր: Էնվեր» (էջ 142): Հատկապես ուշագրավ է վերջին նախադասությունը, որը նույնպես գալիս է լրացնելու առասպելական բնույթը՝ վախենալ որդուց, ով կարող է սպանել հորը՝ ըստ առասպելի տրամաբանության: «Ջոհրապ» կազմակերպությունից դժգոհությունները վերածվում են ավելի լայնամասշտաբ բողոքի գործողությունների Օնգյորենում, և Ջեմի գործընկերներն ու աշխատակիցները նրան խորհուրդ են տալիս գնալ Օնգյորեն, գրուցել տեղի բնակիչների հետ և ցրել վատ տրամադրվածությունը: Սակայն հետաքրքիր է, որ հերոսը չի համարձակվում գնալ Օնգյորեն մի քանի պատճառներով, որոնցից մեր կարծիքով, գերակա են հետևյալ երկուսը. նախ՝ նրա ենթագիտակցության մեջ այդ վայրը, ի վերջո, հանցանքի վայր է, որտեղ նա լքել է իր վարպետին: Իսկ մյուս խնդիրը ճակատագրապաշտական դրդապատճառներն են, ինչի մասին հերոսը խոստովանում է. «Էդիպի և Ջոհրապի պատմություններով տարիներ շարունակ տարվելը իմ սիրտը լցրել էր վախով, և դա անշուշտ ազդեցություն ուներ» (էջ 143): Դրանից հետո Ջեմի աշխատակիցը հայտնում է, որ Օնգյորենում իրոք հայտնվել է մի 26-ամյա երիտասարդ, ով պնդում է, թե նա Ջեմի որդին է, իսկ նրա մայրը դերասանուհի է՝ Կարմիր մազերով կինը, ում հետ տարիներ առաջ Ջեմը մեկանգամյա սեռական կապ է ունեցել:

Առաջարկվում է նաև կատարել ԴՆԹ թեստ, որն էլ կապացուցի այդ պնդման իսկությունը: Հեղինակը մի դետալ էլ է ավելացնում պատմությանը, որը կրկին աղերսներ ունի առասպելների հետ. նրա ենթադրյալ որդին՝ Էնվերը, հարում է ազգայնամոլ ու կրոնամոլ շրջանակներին և ատում է ձախակողմյաններին, ինչպես նաև ատում է հորը ու չարացած է կյանքի նկատմամբ (էջ 145): Այստեղ ուշագրավ է այն, որ Ջեմի հայրը, ինչպես նշվեց, եղել է ձախակողմյան, և փաստորեն թոռը ատում է իր պապի կողմնորոշումը, և դրանով բերվում է առասպելի հետ ևս մեկ համեմատական՝ ասել իր սեփական հորը կամ պապին: Ի վերջո, ԴՆԹ-ի թեստը ապացուցում է, որ Էնվերը Ջեմի որդին է և բացի դրանից՝ իրավունք է ստանում հավակնել հոր ունեցվածքից մասնաբաժնի և նաև հոր ժառանգորդը ճանաչվելուն: Այդ նորությունից հետո հերոսը ներկայացնում է իր հոգեկան ներքին ապրումները՝ կրկին դրանք կապելով առասպելներից բխող իր մտասնեման հետ և ֆատալիստական երանգավորմամբ եզրակացնում է. «Միթե՞ տասնամյակներով Էդիպ արքայի և Ռոստամի ու Ջոհրապի պատմությունները հենց սրա համար էինք ուսումնասիրում» (էջ 147): Հետաքրքրվելով իր ապօրինի տղայով՝ Ջեմն իր համար պարզում է շատ կարևոր մի հանգամանք. Էնվերը բանաստեղծություններ է գրում, այսինքն՝ գրող է, ինչպիսին ցանկանում էր դառնալ ինքը՝ Ջեմը, սակայն որդին գրում և տպագրում է իր բանաստեղծությունները կրոնական և պահպանողական ուղղվածություն ունեցող ամսագրերում (էջ 148-149):

Ի վերջո, երկար խուսափումներից հետո Ջեմը համաձայնվում է գնալ Օնգյորեն, մասնակցել «Ջոհրապ» կազմակերպության նիստին և հանդիպել տեղի բնակչությանն ու գործընկերներին: Հանդիպումից հետո տեղի ունեցած խնջույքի ընթացքում նա հանդիպում է նաև Կարմիր մազերով կնոջը, ով նրան պատմում է 1980-ականներից հետո իր կյանքի, Ջեմից ունեցած որդու մասին: Նաև տեղեկացնում է, որ տեղի երիտասարդներից, որոնք նաև իր որդու ընկերներն են, ստեղծել է թատերական սիրողական խումբ, և ցանկանում են բեմադրել «Էդիպ արքա»-ն: Ֆատալիստական երանգավորումները վեպի վերջում էլ ավելի ցայտուն են դառնում. մասնավորապես՝ Ջեմը հայտնում է, որ իր գլխավոր և միակ ցանկությունը վարպետ Մահմուդի հետ իրենց փորած ջրհորը տեսնելն է: Կարմիր մազերով կինը առաջարկում է, որ թատերասեր երիտասարդների խմբից Սերհաթ անունով մի երիտասարդ ուղեկցի Ջեմին և ցույց տա ջրհորի տեղը: Երիտասարդի անունը ևս որոշակի այլաբանական իմաստ ունի. Սերհաթ նշանակում է սահման, եզրագիծ: Որոշ ժամանակ անց Ջեմը և Սերհաթը աննկատ դուրս են գալիս ռեստորանից և հեղինակի բնորոշմամբ՝ «սովերների, մթության և հիշողությունների միջով լուռ քայլում» (էջ 158) դեպի ջրհորը: Ճանապարհին Ջեմի ֆատալիստական և այլաբանական փնտրտուքների տրամաբանությունը շարունակվում է, ու հերոսը նկատում է. «Ես զգում էի, որ մոտենում էինք

ջրհորին, և ավարտին էր մոտենում տասնամյակներ տևած իմ փնտրտուքը» (էջ 161):

Ջրհորը գտնվում էր մի գործարանի պարսպից ներս, և մինչ Սերհաթը փնտրում է այնտեղ մուտք գործելու ճանապարհ, Ջեմին է զանգահարում կինը՝ Այշեն, և լսելով պատմությունը՝ խնդրում անմիջապես ետ դառնալ, քանի որ Սերհաթը իրականում կարող է լինել նրա ապօրինի որդին՝ Էնվերը, և որպես դրա ապացույց հավելում ամուսիններին տասնամյակներով ուղեկցած մտասնեռումից մի դրվագ. «Մենք տարիներով քեզ հետ ո՞ր պատմություններն էինք կարդում» (էջ 163): Սակայն անգամ այս երկխոսության մեջ սկսում են գերիշխել արևելյան և արևմտյան առասպելների մոտիվները. Այշեն նկատում է, որ եթե այդ երիտասարդը Ջեմի որդին է, ապա նա կսպանի Ջեմին, ինչպես «արևմտյան մի խռովարար» (էջ 163), այսինքն՝ ասոցացնելով Էդիպ արքայի հետ: Սրան Ջեմը գրույցի նույն տրամաբանությամբ պատասխանում է. «Այդ ժամանակ ես էլ Ռոստամի նման ասիացի մի բռնակալ հայր կդառնամ և այդ անհարգալից զավակից շուտ ես նրան կսպանեմ» (էջ 164): Որոշ ժամանակ անց նրանք մոտենում են հին ջրհորին, միասին բացում կողպեքը և վրայի ժանգոտած ծանր կափարիչը: Հերոսը, թվում է, թե ի վերջո հասնում է իր երազանքին՝ տեսնում է տասնամյակներ առաջ իրենց փորած ջրհորը, իր հանցանքի վայրը, սակայն անմիջապես սկսվում է նախ կրոնական հողի վրա բանավեճ մինչ այդ իրեն շատ ավելի հարգալից պահող Սերհաթի հետ: Բանավեճի ընթացքում նրանք անդրադառնում են նաև մողեռնին, ու Սերհաթը ասում է, որ ինքը մողեռն լինելու հետ է կապում սեփական զավակից հրաժարվելու և հայրություն չանելու խնդիրը, որպեսզի այդ կերպ երեխաները մողեռն դառնան: Այնուհետ հանկարծակի հարցնում է Ջեմին. «Դու էլ ես ինձ լքել, որպեսզի ես մողեռն դառնամ» (էջ 167): Ահա այսպես հեղինակը բացահայտում է, որ իրականում Սերհաթը Ջեմի ապօրինի որդի էնվերն է, ով հարցնում է Ջեմին, թե ինչու չի պատասխանել իր նամակին և շարադրում իր մտքերը ընդհանրապես հայրերի և իր ընկալումների մասին: Վերադառնալով առասպելակենտրոն թեմային՝ Էնվերը հանկարծ հարցնում է Ջեմին, թե արդյոք չի վախենում ջրհորը ընկնելուց, կամ որ ինքը Ջեմին կզցի ջրհորը: Դրա համար նա թվարկում է պատճառները. «Վարպետ Մահմութի վրեժը լուծելու համար, ինձ լքելու համար, ամուսնացած մորս խաբելու համար, տարիներ անց որդուդ նամակը անպատասխան թողնելու համար...» (էջ 170): Նաև հավելում է, որ միշտ ցանկացել է հորը կուրացնել: Երբ գրույցը էլ ավելի է թեժանում, Էնվերը քայլ է անում դեպի Ջեմը, իսկ նա, գրպանից հանելով ատրճանակը, զգուշացնում է, որ կկրակի: Դրան ի պատասխան՝ Էնվերը հարձակվում է Ջեմի վրա, նրան տապալում գետնին, ու սկսվում է հայր ու որդու կռիվը ընդ որում՝ Ռոստամի և Ջոհրապի նման. «Սկզբում Էնվերը ինձ գետնով տվեց, հետո՝ ես նրան, հետո՝ կրկին նա և

ատրճանակը վերցնելու համար ձեռքիցս բռնեց ու սկսեց հարվածել ջրհորի բետոնին...» (էջ 171):

Վեպի երրորդ մասը պատմում է Կարմիր մազերով կինը, ով նախ անդրադառնում է 1980 թ. ռազմական հեղաշրջումից առաջ և հետո իրենց ձախակողմյան գործունեությանը, իր սիրելիի, այսինքն՝ Ջեմի հորը: Կինը խոստովանում է, որ տարիներ հետո, երբ Օնգյորենում տեսել է Ջեմին, անմիջապես նմանեցրել է հորը և հետաքրքրվել պատանիով: Ծանոթանալուց հետո լսելով Ջեմի պատմածները՝ լիովին համոզվել է, որ նա իր սիրելիի որդին է: Կարմիր մազերով կինը նույնպես առասպելակենտրոն և ճակատագրապաշտական պահվածք է դրսևորում. «Ինչքան շատ ես կարդում, ինչքան շատ ես հավատում առասպելներին, այնքան շատ եմ դրանք քո գլխին գալիս» (էջ 181): Կարմիր մազերով կինը պատմում է Ջեմի սպանվելու մանրամասները՝ նշելով, որ տղան՝ Էնվերը, պատահաբար է սպանել հորը: Երկու օր հետո ջրհորի հատակից հանում են Ջեմի դին, և դատաբժշկական քննությունը պարզում է, որ նա մահացել է մինչև ջրհորը ընկնելը, սակայն մահվան մեթոդի մեջ նույնպես կա «Էդիպ արքա»-ի ողբերգության հետ զուգահեռ. Ջեմը մահացու վիրավորում է ստացել աչքից, իսկ հայտնի է, որ Էդիպ արքան վերջում կուրացնում է ինքն իրեն: Այսինքն՝ Էնվերի ցանկությունը՝ հորը կուրացնել, և ի վերջո՝ կրակելը նրա աչքին, նույնպես ֆատալիզմի տրամաբանական շարունակությունն է: Կարմիր մազերով կինը, անդրադառնալով Ջեմի սպանությանն ու իր թատերական գործունեությանը, բերում է հետևյալ զուգահեռը. տասնամյակներ առաջ իր շրջիկ թատերախմբում նա մասնակցում էր «Էդիպ արքա»-ի և «Ռոստամ ու Ջոհրապ»-ի բեմադրմանը ու որոշակի տեղում սկսում ողբալ սպանված հերոսի համար: Ճիշտ այդպես էլ տարիներ հետո ջրհորի մոտ նա ողբում է իր որդու և նրա կողմից սպանված հոր՝ Ջեմի համար և եզրակացնում. «Առասպելների և կյանքի միջև պարտադրված զուգահեռ կար» (էջ 190): Վեպի վերջում բանտում գտնվող որդուն այցելող Կարմիր մազերով կինը հայտնում է, որ Էնվերը պատրաստվում է գրել վեպ, որտեղ պատմելու է «ամեն ինչի մասին». նկատի ունի հայր-որդի հարաբերությունները, առասպելները, հայրագրկությունը և այլն: Փամուքը նաև նշում է, որպեսզի Էնվերը կարողանա գրել այդ գիրքը, պետք է «Հոր նման գրքեր կարդա, փորձի հասկանալ, թե հայրը ինչպես է մտածել երիտասարդ տարիներին, իրեն պետք է դնի նրա տեղը» (էջ 194): Այսինքն՝ կրկին պոստմոդեռնիստական ինքնության որոնման ձևը, համաձայն որի՝ եթե ուզում ես գտնել քեզ, ապա պետք է դառնաս ուրիշը:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Օրհան Փամուքի նոր վեպում պահպանված են փամուքյան և պոստմոդեռնիստական որոշ մեթոդներ ու առանձնահատկություններ, սակայն, ի համեմատություն գրողի նախորդ գրքերի, այստեղ ավելի քիչ են հանդիպում քառասյին և հաճախ արհեստա-

կան տպավորություն թողնող պատկերումները: Այս վեպում փորձ է արված ավելի շատ ճակատագրապաշտության համապատկերում ներկայացնել մի կողմից Արևելք-Արևմուտք բախումը, մյուս կողմից ինքնության փնտրտուքը և այդ պատճառով իրականն ու միֆականը երբեմն բավական վարպետորեն միահյուսված են իրար: Նկատենք նաև, որ փամուքյան բարդ ոճին ծանոթ ընթերցողների համար այս վեպում այլաբանական գաղտնանշանները ավելի հեշտ ընկալելի են: Սակայն, այնուամենայնիվ, վեպը ընթերցելուց հետո մի շարք հարցականներ շարունակում են մնալ, և պոստմոդեռնիստ հեղինակի ձգտումը՝ ամեն ինչ ներկայացնել ցայտուն կամ թույլ արտահայտված քառսի շրջանակներում և առիթ տալ բազմաթիվ եզրակացությունների, ստացվել է: Անգամ հայտնի չէ, թե արդյոք գրողը մեղադրում է որդուն հորը սպանելու համար, և ինչպես նկատել է թուրք գրականագետ Յըլդըզ Էջնիթը, Օրհան Փամուքի ստեղծագործություններում անորոշությունը չի շրջանցում ոչ մի ոլորտ ու անգամ «հանցագործն էլ, զոհն էլ ճիշտ են, միակ ճիշտ լուծում չկա»¹:

**Геворг Саакян - Сочетание фатализма и мифов в романе Орана Памука
«Рыжеволосая женщина»**

Проблема отцов и сыновей или учителей и учеников довольно распространена в восточной литературе, в особенности религиозная вариация отношений учителей (мюршид) и учеников (мюррид). Известный турецкий писатель, лауреат Нобелевской премии Орхан Памук, использовал эту тему в ряде своих романов, пытаясь представить его как проблему поиска и достижения совершенства. Будучи постмодернистическим автором и выступая за развитие различных компонентов этого направления, Памук использовал эту идею поиска совершенства в качестве основы его романов, которые в основном концентрируются на личности героя и поиски своего "я". В постмодернистских произведениях, тема фатализма обсуждается также в некоторой степени.

Последний роман, написанный Памуком и опубликован в 2016 году под названием "Рыжеволосая женщина" посвящена поиску своей идентичности сопровождаемая фатализмом. Тем не менее, он рассматривает тему поиска в этой работе в контексте сочетания компонентов классического и популярного восточного мифа о Ростаме и Сохраби с западной трагедией Софокла Царь Эдип, путем преобразования существующих мотивов в работах.

¹ Ecevit Y., նշվ. աշխ., էջ 165.

**Gevorg Sahakyan - *The Combination of Fatalism and Myths in Orhan Pamuk's Novel
"The Red-Haired Woman"***

The topic of the relationship between fathers and sons or master and students is widely spread in eastern literature, especially the topic's religious variation with Masters (Myrshid) and students (myurid). Famous Turkish author, Nobel Prize winner, Orhan Pamuk (born in 1952), uses this theme in a number of his novels, trying to envision it as a problem of desire and attainment of perfection. Being postmodern author and advocating for the development of a different component of this direction, Pamuk used this idea of the search for perfection as the basis of his novels, which mostly concentrates on the hero's identity and myurid. In the post-modern works, the theme of fatalism is also discussed to some extent.

The last Novel written by Pamuk and published in 2016 is entitled "The Red-Haired Woman" and is dedicated to the search of one's identity accompanied with fatalism. Nevertheless, Pamuk views the theme of the search for this work in the context of the combination of the classic and popular eastern myth of Rostam and Sohrab's components and western tragedy by Sophocles Oedipus the King, by transforming the existing motives in the works.